33. ԱԿՈԲ

Կէղնի, չէղնի տղե մը կէղնի։ Ուր անուն Ակոբ կէղնի։ Աղքատ կէղնի։ Կէլնի կէրթա, կէրթա օտարութեն։

Կէրթա, քաղաքի մ'ա ըռաստ կիգա։ Պըտտի, չի պտըտի գործ մ'ա ուր ձեռք չընկնի։ Զարահատյալ մնա, կէլնի թոռ մ'ա կառնի։ Ամեն օր կէրթա ծովու ափ, ծով կթալա, օրեն իրեք հատ ձուկ բըռնա ու բերա չարսուն ծախա։ Իշթե վայնաչար ուր բողազ ղուրմիշ կէնա։

Ըն մեկ օր կէրթա ձուկ թալա, իրեք հատ ձուկ կբըռնա։ Ըն մեկ ձուկ շատ խորոտ, գեղեցիկ կէղնի։

Կըսա.—Վոյա, ես պըտի էսօր զէտ ձուկ էփիմ, ուտիմ, հ'որի օր ես ամեն օր ձուկ թալիմ ու ձուկ մ'ա ինձի չըմ էփի ուտի։

Ու էդա ձուկ շատ խորոտ, գեղեցիկ ա, ու չուր մեկել էրկու ձուկ տանի բազար ծախա, կիգա զուր մեկ ձուկ կեփա օր ուտա։ Զըկան փոր օր պատռա, թաս մ'ա կէղնի ձըկան փոր ու շատ խորոտ, գեղեցիկ թաս մ'ա կէղնի։ Զուր ձուկ կուտա ու կու ծարվընա, կըսա.— Վոյա, պըտի ես իտա խորոտ թասով ջուր էլամ խըմիմ։

Թաս օր կըլնա ջուր, բերա խըմա, վըր ուր բըրնին օր գործա, ըդ թասով օսկի լըցվի ուր ձոց. կըսա. «Գոհանամ զաստված, իմ մորից օր էղեր ինք, ինձի հեչ կյանք մը չընք տեսեր ինք, բայց գոհանամ զաստված, ըսօրնե ետ կուսամ աստուց, աստված պըտի զիմ խըսմաթ իտա»։

Ու տըղեն շատ կուրախնա վըր ուր թասին։ Տըղեն կէրթա կուժ մ'ա ջուր բերա ու թասով կըլնա ու կտարտկա։ Ըտ կուժ ջուր կէղնի պոլոր օսկի ու կտանի ուր ինք կպայա։

Օր մ՝ա տղեն գինի կխըմա, կհարբենա։ Կառնի զուր թաս, կէրթա նրստի վըր աղբրի մ՝ա ու կըլնա ըտ աղբըրից ջուր ու կտարտկա։ Շատ կըլնա ու կղարտկա ու կուտոց օսկի ըտտեղ քըսուկ ա։ Կտեսնա օր, թագավորի ախչիկ նստեր ա ֆուրզուն ու կէրթա սեյրան կէնա ու կիգա ըդ աղբըրին կպատահի։ Տղեն զթաս կիտա ախչիկ։ Ախչիկ ջուր կըլնա օր խմա, ախչիկ տեսնա օր ըդ թասի մըջի ջուր դարցավ օսկի։

Ախչիկ տըղին կըսա.— Զէդ թաս չը՞ս իտա ընձի։

Տղեն կըսա.— Կիտամ, հ՝որի՞ չըմ իտա։

Տղեն ախչկան կըսա.— Արի իտանք, առնինք, թաս կիտամ քըզի։

Ախչիկ կըսա.— Թոխ էղնի, ինչ կա, ոչինչ։

Ախչիկ կիտա տղին, զթաս ու զօսկին տղուց կառնի։

Տղեն օր գինին ուր գլխուց թափի, կթողա զգետին, թըպա զուր գլուխ, էլ օգուտ մ՝ա չըկըտրա։

Տղեն կթողա, կիգա զուր տուն։ Զուր կուժ օսկին կհանա, էն լա ուր թասի տեսակով կկորցուլ ու դրզեն կմընա խեղճ։

Հ՝ոդի թողինք զտղեն, տառնանք վըր ախչկան։

Թագավոր կհասկընա ու կըսեն.—Քու ախչիկ էրկուհոգովցեր ա։

Թագավոր կըսա.— Օր ընդպես ա, ես թագավոր մ՝էղնիմ, ըդ անպատվութեն իգա վըրե՞ս։ Կապեք զէդի ծիաներու պոչեր ու թողեք դուրս, թող տանեն սար ու ծոր օլորցուն, քար ու փետ զէրկեն ու զուր կըտորներ սարեր թողնին ու իրկուն իգան զուրանց պոչ ծովու մեջ լըվան ու իգան տուն։

Ու էլան թագավորի ծառաեք, ղըտ ախչիկ առան, տարան վերվերի սար մ՝ա թողեցին ու էկան։

Ըդ թագավորի ախչիկ բերեց, կուժ մ՝ա ջուր ըդի գըրեց, ու զըդ թաս լըցեց ու դարտկեց ու ըդ կուժ ջուր պոլոր էղավ օսկի։ Էկավ, յոթ ճամբու կըցորդ լավ փառավոր ջրով տեխ մ՝ա, ուրեն շինութնի տեխ նըշանեց ու գընաց քառասուն հատ լավ ուսթա բերեց։

Ուսթեսներուն ըսեց.— Ծեր հաղ ըսեք, օր դուք ընձի ընպես քոշկ մ՝ա սուքիք, օր էրկրրներ ու քաղքներ ու թագավորի շինութներ ըմպես մ՝ա քոշկ չէղնի։

Ուսթեք ըսեցին խոսքի հակառակ.— Էրկու միլոն օսկի կուզինք։

Ախչիկ ըսեց.— Էրկու միլոն փոխարեն քառասուն միլոն օսկի ես պըտի տամ ծեզի։

Ու ուսթեք շատ ուրախցան ու սկսեցին տուքել։

Ու քառասուն օր սուքեցին, զախչկա քոշկ լըմնցցին։ Ու ամեկ ուսթեն միլոն մա օսկի առավ, կես միլոն լա ամեկ ուսթեն բաշխիշ տըվեց,

Հ՝որի օր ուր քոշկ շատ խորոտ էր ու գեղեցիկ էր։ Ուր քոշկի նման աշխար մարթ տեսած չըր էղեր է։

Ու ախչկա ին ամիս օր լըմընցավ, ախչիկ պառկավ, բերեց տղե մ՝ա։ Ֆըռոն մա աղքատաց բացեց, հ՝ընցնող-դարձնող էկան ու գացին։ Ու յոթ ճամբու կըցվան է, հազարներ կիգեն ու հազարներ կէրթեն։

Հ՝որի՞ ախչիկ ղէղ հունարքներ բանցուցեր. շնորհիվ աստծուն ու ըդ օսկե թասին։ Հ՝որի օր լըմնալ չըկար ուրեն, ինչքան էլեր ջուրը ղարտկեր, կէղներ օսկի։

Թողինք ղախչիկ, դառնանք վըր տղին։

Տղեն ընկե ուր խըղճությյան մեջ։ Ու կտանջվի, ոչ հալի մը չըկըրնա հասնի։ Ժամանակ մա կմնա, տղեն պատմութեն մ՝ա կհասկընա։ Կհասկընա թե՝ ըդ քաղքի առաջ՝ յոթ ճամբու կըցվան մարթ մա ֆըռոն մա բացե ու զխեղճ մարդիկ կկերակլա, հ՝որի օր ըդ ֆըռոն աղքատաց համար ա։

Տղեն կէլնի կդիմա ըդ քոշկին ու կէրթա։ Կէրթա ըդ քոշկին ըռաստ կիգա, կէրթա ըդ ֆըռոն հաց կուտա։ Ախչիկ զըդ տղեն կտեսնա ու կճանճընա, բայց տղեն վախչիկ չէ ճանճնա, հ՝որի օր ախչիկ մարդանակ շոր ի հագուկ։ Ախչիկ տղեն կանչի տանի, լավ մ՝ա համամլամիշ կէնա, լավ ծեռք մը շոր կհագնու ու կտանի ուր սենյակ։

Տղին կըսա.— Դու աղքատ էր, խեղճ էր, խըստ ըներ իմ շրնութենին էկար, բայց որ օր էկեր ա, զզըլխու գալած ինձի պատմեր ա, դու լա ընձի պըտի պատմիս ու անցնես էրթաս։

Տղեն կըսա.— Ընձի գըլխու գալած չըկա։

Տղեն ախչկան ըսեց.— Ես խեղճ թակ տղե մ՝ենք, էլա օտարութենին թիմի ու օտարութեն գընացի։ Հեչ գործ մ՝ա ծեռս չանցավ։ Ես շարահատյալ մնացի, էլա ձրկան մա թոռ առա, օր ձուկ թալինք, հ՝որի օր իմ խեղճության խաթըրի համար, օր կըտոր մ՝ա հաց ուտինք։ Էլա ձուկ թալեցի, օրեն իրեք հատ ձուկ իմ ձեռս կընկներ, բերենք շուկեն ծախենք, զիմ իտարեն կէնենք։ Մի օր լա ձուկ թալեցի, շատ խորոտիկ, գեղեցիկ ձուկ մ՝ա բըռնեցի։ Էրթում էնեցի, ըսեցի՝ տաս օսկի տան, պըտի ես ըդ խորոտիկ ձուկ չըտամ, ձուկ թալեր իմ մինչև ըսօր, ձուկ մա չըմ էփերի կերերի, ըսօր ես պըտի ըդ ձուկ էփեմ ուտեմ։ Ջուր փոր բացի, տեսա օր թաս մ՝ա հանդեր ձրկան փոր ու ըդ թաս շատ խորոտիկ էր։ Ես իմ ձուկ օր կերա, ծարվըցա, ըսի՝ էլնամ թաս մ՝ա շուր ընձի խըմեմ։ Ես օր լըցի ըդ թասով ջուր, պըտի խըմենք, տեսա օր ըդ թասի ջուր պոլոր էղավ օսկե։ Ես լա բերեցի կուժ մ՝ա ջուր, բերի լըցի մըչ ըտ թասին ու դարտկի։ Պոլոր էղավ օսկի ու զըտ օսկին լըցի մըչ կըժան, պայեցի։

Օր մը լա ես գինի խմեցի ու հարբեցա։ Էլա առա ղիմ թաս, գացի վըր տղբըրի մ՝ա, ջուր լըցի ու դարտկի, կուտոց մա օսկի հ՝ոտի սուքի ու տեսա թագավորի ախչիկ մ՝ա նըստեր էր ֆայտոն, էկեր էր սեյրան ու էկավ վըր աղբըրին, ջուր ուզեց։ Թաս մ՝ա ջուր լըցի, տվի ըտրան։ Ըդի աչքեց, տեսավ ըդ թաս ջուր պոլոր էղեր էր օսկի։ Ախչիկ ընձի ըսեց. «Զըտ թաս չը՞ս իտա ընձի»։ Ու ես լա ըսեցի. «Կիտամ քըզի»։ Հ՝որի օր ես գինի ենք խըմեր ու հարբեցեր ենք։ Ախչիկ ըսեց. «Ի՞նչ տամ քըզի»։ Ես լա ըսի. «Իտանք առնինք, զըտ թաս կիտամ քըզի»։ Ու ախչիկ ըսեց. «Թոխ էղնի»։ Ես թաս տվեցի ուրեն։ Իմ գինին օր իմ գլխուց թափավ, թողեցի զգետին, տըփի ղիմ չոքեր, էլ օգուտ մա չըկար։ Ես էլա դեպ իմ տուն գացի, կուժ մը լա օսկի ունենք, զէն լա նըմանապես կերա ու խըմի, ընտրնե լա փըրցա։ Ու ես հեղ մը՝ լա շատ խեղճ էղա ու էկա էդա դըրութենի մեջ ու իմ գլխու գալած իդա էր, օր քըզի պատմեցի։

Հ՝օնի տղեն ուր խոսակցութեն թըմավ, ախչիկ ուրեն խոսաց, ըսեց.—Ըն ախչիկ օր էկեր է աղբըրի վրեն, օր ես քըզի ցուցում, դու չըս ճանչնա՞,— ըսեց,— փանջարեն ու վեր աչքա։

Տղեն փանջարեն ու վեր աչքեց, տեսավ օր ուր թասի նըման թաս մա դրուկ էր փանջարեն, ու տղեն խորուն ախ մա քաշեց։

Ախչիկ տղին ըսեց.—Հ՝որի՞ ախ կէնիս։

Տղեն ըսեց.—Թաս մա կա էդա փանջարեն, ըմա կնըմանի իմ օսկի թասին։

Ախչիկ ըսեց.— Քենե պայիմ, աստծուց ի՞նչ պայիմ, վոլա, թաս քու թասն ա, ես լա ըն ախչիկն իմ, էդա պըզտիկ տղեն լա մեր տղեն ա, ու ես մարթանակ շոր իմ հագե, օր տա յոթ ճամբու կըցվան մարթ մա չըգինա, օր ես ախչիկ իմ։

Ըդ տեղ զիրար ճանճրցան։ Տղեն շատ մ՝ ուրախցավ։ Ճամբցին յոթ ծեռք դհոլ ու զուռնա բերին, տաս-տասնհինգ օր զուրանց հարսնիք էնին, կերուխում էնին, ուրանց նըստան։ Ըդտեղ ուրանք հասան ուրենց մուրազին։

Ժամանակ մ՝ու մընաց։ Ըդա ախչկա պապ անուն ասկըցավ, ըսեց թը.—Ֆլանի յոթ ճամբու կըցվան մարթ մը հ՝ոնի յափու մա սուքեր ա, մըջ աշխարքին, էրես գետնին հ՝ըմալ յափու մ՝ա չըկա։ Ես պըտի ըսօր էրթամ ու զէն յափուն սեյր էնիմ, տեսնամ ինչպես յափու մա, տեսնամ լա ըն մարթ լա ինչպես մարթ մա։

Ու թագավոր էլավ հարիր ծիավորով ըտ յափուլին խըստ էնեց ու գնաց։ Շատ ու քիչ գընաց, ըդ յափուի դուռ կանավ ու լավ մա ըդ յափուն թամաշա էնեց։ Տեսավ օր, ըտ յափուի նըման յափու մ՝ա չըկա ու ըտս. ախչիկ զէդ ուր էրիկ հ՝ըմալ ծեռք մա շոր հագցեր էր, ախշար դու օր օլոր-

տեր, հ՚ըմալ ծեռք մա շոր չըկար։ Ու ըտ մարթ էլավ թագավորի առաջ, զթագավորի մարթիք քաշեց, տարավ նըստըցուց, զթագավոր տարավ ուր սենյակ, զթագավորի մարթիկ լավ մ՚ա կերակլեց ու ընպես ինք ծանր մարթ մ՚էր, օր թագավոր օր ընգիեն էկավ, ինք նըստուկ տեխեն չէլավ կանավ։

Թագավոր օր ջուր ուզեց, օր պըտի լվացվեր, ըտ մարթ լըցեց ջուր, տարավ պըտի հ՚ըլներ թագավորի ծեռաց վըրեն ու թագավոր չըթողեց ու ինք ջուր գըրեց թագավորի կըշտին ու գընաց, նըստավ։ Ինք օր էլավ, կլվացվեր, թագավոր տարավ ջուր կըլեր վըր ուր ծեռաց ու ինք թողեց, թագավոր լա ջուր լըցեց վըր ուր ծեռաց ու ինք լվացվավ, հ՚որի օր թագավորի ախչկա սովրցած բաներն էր։

Իրկուն օր էղավ, թագավոր ու ըղա ախչիկ ու ըդ տըղեն միասին նըստուկ են սենյակ։ Թագավորի ախչիկ մարթանակ շորեր հադուկ, մարթ մ՚ա չըր ճանճընի թե ըդի կընիկ ա, որ տեսներ կըսեր՝ մարթ ա։

Թագավորի փեսեն դուրս էլավ, թագավոր ջուր ուզեց, ըդոր ախչիկ էլավ, լըցեց թաս ջուր, տվեց թագավորին։ Թագավոր պըտի զէդ թաս ջուր խըմեր, տեսավ օր ըդ թաս լիք դարձեր էր օսկի։ Թագավոր շատ զարմացավ։ Ըտ ախչկան ըսեց.— Ըտու թաս չըս ծա՞խի։

Ախչիկ ըսեց.— Կծախիմ։

— Թը ուզաս նա, ի՞նչ կուզես։

Ախչիկ ըսեց.— Օ. մ՚ա տաս ընձի, ես ըտ թաս կիտամ քըզի։

Թագավոր ըսեց.—Թոխ էղնի։

Ախչիկ բերեց դաղմեն մա կարմըրցուց, դըրեց թագավորի օ...։ Թագավորի օ. դաղմըվավ։ Թագավոր ըսեց.— Ընչի՞ ըտպես էնիր։

Թագավորի ախչիկ ըսեց.— Աղեկ էնի, ես քու ըն ախչիկն իմ, օր էրկուհոգովցա, դու քու ծառաներուն ըսեցիր՝ զըդա ախչիկ տարեք, ծիաներու պոչերը կապեք, թոխ ուր կըտորտանք սարերը մընա։ Քու ծառաներ լա զիս տարան փանծր սարի մ՚ա գըլուխ թողեցին։ Ես լա էկա իդա տեղ, ըդա յափոն ինձի սուքեցի, շնորհիվ սածոն ու ըդ թասին, հ՚որի օր ես օր մ՚ա տընեն էլա, կէրթենք սեյրան, ես գացի աղբըրի մ՚ա վըրա, մարթ մ՚ա կար ընտեղ, ըտ մարթ իդա թաս տվեց, ջուր լըցի ու խըմի, ըդ թասի ջուր դարձավ օսկի ու ըդ թաս ապով էլա զիմ նամուս կոտրի։ Դու ծառաներուն ըսեցիր՝ էլեք տարեք զէդի կորսցեք։ Ես ախչիկ մ՚ա ենք, զէդ բան էրեցի։ Բայց դու թագավոր մա ես, դու ի՞մալ քու նամուս կիտաս էտա թասին,— կըսե,—վոլա, ես քու ախչիկն իմ, ըդա մարթ լա թասի տերն ա, էտ լա քու փեսեն ա։

Նոր ճանճվորութեն կիտա թագավորին։

Թագավոր զուր ըրած գործեր փոշմընի ու կզրզճա։ Կըսա.— Ես մեղա աստծու, դուք էմ լե իմ հոգեկան զավակ, ես ձրգի հայր, ներողամիտ կլինես, ես մեղա աստծու, իմ էրած գործից ես զըղճացի։

Իրեք խընձոր իշավ էրկնուց, մեկ՝ ըսողին, մեկ՝ լըսողին, մեկ լա՝ պահմեթ քաշողին։

Ուրանք հասան ուրանց մուրազին, գու լա հասար քու մուրազին։